ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

ԵՐԵՎԱՆ 2022

© Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), 2022թ.
Նյութը վերահրատարակելու, կրկնօրինակելու, տպագրելու կամ թարգմանելու ցանկության դեպքում անհրաժեշտ է ձեռք բերել ՅՈՒՆԻՍԵՖ- ի գրավոր թույլտվությունը՝ հարցում ուղարկելով հետևյալ հասցեներին. ՅՈՒՆԻՍԵՖ, Պետրոս Ադամյան փող. 14, Երևան, 0010, Էլ. հասցե՝ yerevan@unicef.org

ՅՈՒՆԻՍԵՖ-ի լուսանկարները պաշտպանված են հեղինակային իրավունքով և չպետք է վերատպվեն որևէ հարթակում՝ առանց ՅՈՒՆԻՍԵՖ-ից նախնական գրավոր թույլտվություն ստանալու: ՅՈՒՆԻՍԵՖ-ի լուսանկարները տարածելու/վերատպելու վերաբերյալ հարցումները պետք է ուղղվեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակին՝ Պետրոս Ադամյան փող. 14, Երևան, 0010 կամ yerevan@unicef.org էլ.հասցեին:

Կազմի լուսանկարը՝ © UNICEF Armenia/2021/Մարգարյան

Երևան, 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամփոփագիր

Հայաստանի կրթության ոլորտի վերլուծությունը պատվիրել է ՅՈՒՆԻՍԵՖ-ը Կրթության համաշխարհային գործընկերության (ԿՀԳ) հիմնադրամի՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած «Կրթության ոլորտի զարգացման ծրագիր» դրամաշնորհի շրջանակում: Ուսումնասիրությունը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) հետ քննարկման արդյունքում: Ուսումնասիրությունն իրականացրել է փորձագիտական խումբը, գնահատել են անկախ գրախոսներ, և վերանայել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ)՝ համապատասխանաբար դրամաշնորհային գործակալի և համակարգող գործակալության աշխատակիցները/խորհրդատուները՝ ընտրված տեղական կրթական խմբի կողմից (ՏԿԽ), որը ստեղծել է ԿԳՄՍՆ-ն ԿՀԳ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակում:

Երախտագիտություն

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) բարձր է գնահատում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) անգնահատելի աջակցությունն այս զեկույցի պատրաստման գործում: Մասնավորապես շնորհակալություն ենք հայտնում նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին և հանրակրթության վարչության պետ Արսեն Բաղդասարյանին: Հանրակրթության վարչության հետ հետևողական համագործակցության շնորհիվ մենք կարողացանք տեղեկություն ստանալ ոլորտի պետական նախաձեռնությունների մասին և ապահովել սահուն հաղորդակցություն: Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում Արտակ Պողոսյանին (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ)) և նրա թիմին, հատկապես մեր թիմին՝ ոլորտի վերաբերյալ արժեքավոր տվյալներ տրամադրելու համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, հատկապես Զավեն Խլղաթյանին՝ կրթության ոլորտի վերլուծության շրջանակում դպրոցական ենթակառուցվածքների գնահատումն իրականացնելու համար մեթոդական ուղեցույցի տրամադրման համար:

Այս զեկույցը պատրաստել է CIVITTA AM-ի թիմը՝ Սևակ Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Աշխատանքներն իրականացվել են Ալվարդ Պողոսյանի (Կրթության մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ) և Արման Գասպարյանի (Կրթության համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ) ընդհանուր ղեկավարությամբ: Թիմն անչափ երախտապարտ է Ադրինե Բաբլոյանին (Հետազոտության և գնահատման համակարգող, ՅՈՒՆԻՍԵՖ) և Աստղիկ Մարտիրոսյանին (Երեխաների իրավունքների մոնիտորինգի և գնահատման մասնագետ, ՅՈՒՆԻՍԵՖ) մասնագիտական գրախոսության համար, Զոյա Անդեկյանին (ծրագրի օգնական, ՅՈՒՆԻՍԵՖ) վարչական հարցերում աջակցության համար, ինչպես նաև Ազնիվ Նասլյանին՝ վերջնական զեկույցի հայերեն տարբերակը սրբագրելու համար: Շնորհակալություն ենք հայտնում նաև Գոհար Մուսայելյանին (Ծրագրի ավագ ղեկավար, ԱԶԲ) և Նարեկ Մանուկյանին

(Ծրագրի խորհրդական, ԱՁԲ)՝ կրթության ոլորտի վերլուծության տարբեր փուլերում ուղղորդման և առաջարկությունների համար:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում պետական գերատեսչությունների, կրթական հաստատությունների, տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին, որոնք պատրաստակամորեն տրամադրեցին իրենց ժամանակը առանցքային տեղեկատուների հարցազրույցներին մասնակցելու և Հայաստանի կրթության ոլորտի վերաբերյալ իրենց արժեքավոր պատկերացումները ներկայացնելու համար: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ), «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի անդամներին և այլոց՝ կրթության ոլորտի վերլուծության արդյունքների վավերացման աշխատաժողովին մասնակցելու և անգնահատելի հետադարձ կապ և առաջարկություններ տրամադրելու համար:

Հայցում ենք ներողամտություն ցանկացած բացթողման համար և մեր անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում բոլորին, ովքեր սիրով նվիրեցին իրենց ժամանակը և փորձը:

Ամփոփագիր

Հայաստանի կրթության ոլորտի վերլուծությունը պատվիրել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) Կրթության համաշխարհային գործընկերության (ԿՀԳ) հիմնադրամի՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած կրթության ոլորտային ծրագրի զարգացման դրամաշնորհի շրջանակում:

Այս ուսումնասիրությունը միտված է խթանելու երկրում քաղաքականության շուրջ բանավեճը, բարելավելու ապագա քաղաքականությունների արդյունավետությունը՝ բոլոր շահակիրների ուշադրությունը հրավիրելով վերհանված հիմնախնդիրների վրա:

Ուսումնասիրության առաջնային նպատակն է անհրաժեշտ փաստական հիմք ապահովել կրթության զարգացման ծրագրերի մշակման և իրականացման համար:

Հետազոտությունում կիրառված տվյալների հավաքման հիմնական մեթոդը եղել է գրասենյակային վերլուծությունը, որը համալրվել է հիմնական շահակիրների և իրազեկողների հետ խոր և կիսակառուցվածքային հարցազրույցների միջոցով հավաքված որակական տվյալներով, ինչպես նաև ազգային և միջազգային վիճակագրական կազմակերպությունների՝ երկրորդական քանակական տվյալներով:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-ժողովրդագրական գործոններ:

Համաձայն զեկույցի կանխատեսումների՝ առաջիկա տասնամյակի ընթացքում ՀՀ բնակչության թվաքանակը առկա միտումների պահպանման դեպքում կշարունակի նվազել: Միևնույն ժամանակ, բնակչության տարիքային և աշխարհագրական կառուցվածքում տեղի կունենան զգալի փոփոխություններ, որոնք էական ազդեցություն կունենան հանրակրթության ոլորտի վրա, քանի որ անհրաժեշտ կլինի համապատասխանորեն վերաբաշխել հանրային ռեսուրսները:

Մասնավորապես, զեկույցը կանխատեսում է, որ 2030 թվականին նորածինների թվաքանակը 2020 թվականի համեմատ կնվազի 14.7 %-ով, իսկ նախադպրոցական տարիքի

(3-5 տարեկան) բնակչության թվաքանակը կնվազի 15.8 %-ով:

Միևնույն ժամանակ, դպրոցահասակ բնակչության թվաքանակը կնվազի 5.9 %-ով, որոնց թվում տարրական դպրոցի տարիքի (6-9 տարեկան) երեխաների թվաքանակը կնվազի 14.0 %-ով, միջին դպրոցի տարիքի (10-14 տարեկան) երեխաների թվաքանակը կնվազի 9.5 %-ով, իսկ ավագ դպրոցի տարիքի (15-17 տարեկան) երեխաների թիվը կաճի 13.2 %-ով:

Կանխատեսվում է նաև, որ խնամառության տարիքային գործակիցը 2020 թվականի 57.5 %-ի համեմատ մինչև 2030 թվականը կբարձրանա 66.5 %-ով, ինչը կհանգեցնի սոցիալական աջակցության նկատմամբ պահանջարկի աճին՝ լրացուցիչ սրելով առանց այն էլ սուղ հանրային ռեսուրսների ծանրաբեռնվածությունը:

Երեխաների ընդհանուր թվաքանակից Երևանում բնակվող երեխաների մասնաբաժինը կաճի 5 տոկոսային կետով՝ հասնելով 40.7 %-ի, իսկ մարզերի գյուղական և քաղաքային բնակավայրերում բնակվող երեխաների մասնաբաժինը կնվազի՝ հասնելով համապատասխանաբար 35.1 %-ի և 24.2 %-ի: Միևնույն ժամանակ, դպրոցահասակ բնակչության թվաքանակը Երևանում կընդլայնվի 11.2 %-ով, իսկ մարզերի գյուղական և քաղաքային բնակավայրերում կնվազի համապատասխանաբար 13.2 %-ով և 16.8 %-ով:

Աղքատություն:

Մանկական աղքատությունը շարունակում է մնալ էական հիմնախնդիր, 2020 թվականին մանկական աղքատության մակարդակը եղել է 33.9 %:

Իբրև դպրոց չհաճախելու հիմնական պատճառ 2020 թվականին աղքատ երեխաների 4.0 %-ը, իսկ ծայրահեղ աղքատների 20.7 %-ը նշել են շատ թանկ լինելը կամ ստիպված աշխատելը:

Ըստ 2020 թվականի մարդկային կապիտալի համաթվի, որը բնութագրում է մարդկային կապիտալի չափը, որին այսօր ծնված երեխան կարող է ակնկալել հասնել 18 տարեկանում՝ Հայաստանում ծնված երեխայի արտադրողականությունը չափահաս դառնալիս կազմում է 58 %՝ համեմատած նրա, որին նա կհասներ, եթե հնարավորություն ունենար ստանալու լիարժեք կրթություն և լիներ լիարժեք առողջ:

Հաշմանդամություն:

Հաշմանդամության կարգավիճակ ունեցող երեխաների թվաքանակը 2020 թվականին եղել է 8,771, ինչը մինչև 18 տարեկան բնակչության 1.2 %-ն է:

Երեխաների հաշմանդամության հիմնական պատճառներն են նյարդային համակարգի հիվանդությունները ու հոգեկան և վարքի խանգարումները: Մասնավորապես, 2020 թվականի դրությամբ երեխաների հաշմանդամության գրանցված դեպքերի 23.9 %-ի պատճառ են եղել նյարդային համակարգի հիվանդությունները, իսկ 28.4 %-ի պատճառ եղել են հոգեկան և վարքի խանգարումները: Նյարդային համակարգի հիվանդություններ ու հոգեկան և վարքի խանգարումներ ունեցող հաշմանդամ երեխաների բացարձակ թվաքանակն ունի աճի միտում և 2010-2020 թվականներինին ընդլայնվել է 72 %-ով:

Առողջություն:

Երեխաների առողջության հիմնական խնդիրներից մեկը թերսնումն է: 2021 թվականին Հայաստանի տնային տնտեսությունների 21.4 %-ը ապահովված չէր բավարար պարենով, իսկ 6-23 ամսական երեխաների կեսից ավելիի սննդակարգը չէր համապատասխանում նվազագույն պահանջներին:

2020 թվականին դպրոց չհաճախող աղքատ երեխաների 0.9 %-ի, իսկ ծայրահեղ աղքատների 3.9 %-ի դպրոց չհաճախելու հիմնական պատճառը եղել է հաշմանդամությունը կամ հիվանդ լինելը:

Աղետներ:

Հայաստանի դպրոցների կեսից ավելին, որոնցում սովորում է աշակերտների 2/3-ը, ենթակա է բարձր սեյսմիկ ռիսկի: Մասնավորապես, Հայաստանի 1,402 դպրոցներից 769-ը բարձր սեյսմիկ վտանգի, իսկ 475-ը՝ միջին սեյսմիկ վտանգի գոտում են: Ընդ որում՝ Երևանի բոլոր դպրոցները բարձր սեյսմիկ վտանգի գոտում են:

Երկրորդային վտանգների ռիսկը թեպետ ցածր է, բայց 70 դպրոցներ, հիմնականում Երևանում և Արմավիրում, Մեծամորի ատոմակայանից մինչև 50 կմ շառավղով հեռավորության վրա են:

ՔՈՎԻԴ-19:

Համավարակի ընթացքում տնային տնտեսությունների 13.8 %-ում դպրոցահասակ երեխաները չեն մասնակցել հեռավար դասերին, որոնցից 88 %-ը՝ տեխնիկական միջոցների բացակայության պատճառով: Միաժամանակ, հաշմանդամ երեխա ունեցող տնային տնտեսությունների 28.6 %-ում երեխաները համավարակի ընթացքում չեն մասնակցել հեռավար դասերին:

2020 թվականին Հայաստանի հանրակրթական դպրոցներում

17.1 աշակերտին բաժին էր ընկնում ընդամենը մեկ համակարգիչ: 2022 թվականի դրությամբ տասը դպրոցական համակարգիչներից ութը կա՛մ շարքից դուրս եկած են, կա՛մ մաշված:

Ավելին՝ 2020 թվականին քաղաքներում տնային տնտեսությունների միայն 63.1 %-ը, իսկ գյուղերում՝ միայն 50.8 %-ն ուներ համակարգչին հասանելիություն ունեցող առնվազն մեկ անդամ: Նմանապես, քաղաքներում տնային տնտեսությունների միայն 80.1 %-ը, իսկ գյուղերում՝ միայն 71.5 %-ն ուներ համացանցին հասանելիություն ունեցող առնվազն մեկ անդամ:

Լեռնային Ղարաբաղի եւ դրա շուրջ հակամարտություն:

Հակամարտության հետևանքով 107 դպրոց անցել է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Հակամարտության սրումից առաջ Լեռնային Ղարաբաղում (ԼՂ) սովորող 24,000 աշակերտների համեմատ այժմ այնտեղ շուրջ 18,000 աշակերտ է սովորում: Ադրբեջանին սահմանակից համայնքներում, հատկապես Սյունիքում և Տավուշում, անվտանգության խնդիրները և հակամարտությանը մերձ տարածքում գտնվելը ավելի են սրում երեխաների խոցելիության, ներառյալ որակյալ կրթության հասանելիության խնդիրները:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Մակրոտնտեսական համատեքստ:

Նախորդ տասնամյակի ընթացքում Հայաստանում արձանագրվել է չափավոր տնտեսական առաջընթաց, ՀՆԱ-ի միջին տարեկան աճը եղել է 3.4 %: Տնտեսության վաղեմի կառուցվածքային հիմնախնդիրները արգելակում են տնտեսական ներուժի ամբողջական իրագործումը: Արտագաղթը, կառավարման բացերը, ծերացող բնակչությունը, հմտությունների անհամապատասխանությունը, ինչպես նաև տարածաշրջանում աշխարհաքաղաքական լարվածությունը վտանգում են տնտեսության կայուն աճի հեռանկարը:

Հանրային ֆինանսների համատեքստ:

Նախորդ տասնամյակի ընթացքում համախմբված բյուջեի անվանական եկամուտներն աճել են տարեկան 7.2 %-ով, իսկ եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը միջինում եղել

է 23.9 %: 2010-2020 թվականներին համախմբված բյուջեի դեֆիցիտը եղել է ՀՆԱ-ի 3,2%-ը, մինչդեռ տոկոսավճարներն աճել են տարեկան 18,5 %-ով: Միևնույն ժամանակ, կապիտալ ծախսերի մասնաբաժինը բյուջեի ընդհանուր ծախսերում 2010 թվականի 20 %-ի համեմատ նվազել է՝ 2020 թվականին կազմելով 12.4 %:

Կրթությանն ուղղվող հանրային ծախսեր:

Կրթության մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում 2018 թվականի 10.1 %-ի համեմատ 2020 թվականին նվազել է մինչև 9.1 %, քանի որ հանրային կրթական ծախսերի հավելաճն ավելի դանդաղ է եղել, քան ընդհանուր ծախսերի հավելաճը:

Հանրային կրթական ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2010 թվականի 3.3 %-ի համեմատ նվազել է՝ 2020 թվականին կազմելով 2.8 %: Այս ցուցանիշով Հայաստանը էականորեն զիջում է համադրելի և հենանիշային երկրներին, քանի որ 2020 թվականին հանրային կրթական ծախսեր-ՀՆԱ հարաբերակցությունն, օրինակ, Վրաստանում եղել է 3.8 %, Մոլդովայում՝ 6.1 %, Մերձբալթյան երկրներում՝ 4.5 %:

Հայաստանը համադրելի և հենանիշային երկրներին էականորեն զիջում է նաև մեկ շնչի հաշվով հանրային կրթական ծախսերի ցուցանիշով: 2020 թվականին մեկ շնչի հաշվով հանրային կրթական ծախսերը Հայաստանում եղել են 359 համարժեք գնողունակության դոլար՝ ի տարբերություն Վրաստանի և Մոլդովայի, որտեղ այդ ցուցանիշը շուրջ 50 %-ով բարձր էր:

Կրթության ֆինանսավորման մասնաբաժինը համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում՝ առանց պետական պարտքի սպասարկման, բնորոշում է Կառավարության՝ իր կողմից վերահսկելի ծախսերի շրջանակում կրթությանը տրվող առաջնահերթությունը: 2020 թվականին այդ ցուցանիշը եղել է 9,9 %՝ 2018 թվականի 11.1 %-ի համեմատ:

Կառավարության՝ կրթության ֆինանսավորման կարողությունը կախված է հարկային եկամուտները հավաքելու կարողությունից և բնորոշվում է իբրև հանրային կրթական ծախսերի ու համախմբված բյուջեի եկամուտների (առանց դրամաշնորհների) հարաբերակցություն: Այս ցուցանիշը 2020 թվականին եղել է 11.2 %՝ 2018 թվականի 10.9 %-ի համեմատ: Աճը վկայում է կրթության ֆինանսավորումն ընդլայնելու՝ նվազող կարողության մասին:

Կրթության ոլորտում պետական բյուջեի կատարողականը 2016-2020 թվականներին միջինում եղել է 90 %:

Նախադպրոցական կրթության վրա 2016-2020 թվականներին համայնքների (Երևան և մարզեր) բյուջետային ծախսերը եղել են 18.3 մլրդ դրամ, որը հավասար էր կրթության վրա համայնքների ընդհանուր ծախսերի 41.4 %-ին և համայնքների ընդհանուր ծախսերի 14.3 %-ին:

2024 թվականին կրթության վրա պետական բյուջեի ծախսերը 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով պլանավորված են ՀՆԱ-ի 1.7 % մակարդակում:

Բազմակողմ դոնորների իրականացրած հիմնական ծրագրերը:

Համաշխարհային բանկը (ՀԲ), որը Հայաստանում ավանդաբար կրթության ոլորտի զարգացման ծրագրերի հիմնական իրագործողն է եղել, նախորդ երկուսուկես տասնամյակում չորս ծրագիր է իրականացրել՝ ընդհանուր շուրջ 90 մլն ԱՄՆ դոլարի ծավալով:

Ներկայում Ասիական զարգացման բանկն (ԱԶԲ) իրականացնում է 88,5 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագիր (լրացուցիչ 18,5 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ), որի նպատակն է Հայաստանի 46 դպրոցների հիմնանորոգումը և սեյսմակայունության ապահովումը:

Դպրոցների բյուջեներ:

Դպրոցների բյուջեներում ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տեսակարար կշիռը Հայաստանում ավելի բարձր է, քան համադրելի և հենանիշային երկրներում: Ոչ ուսուցչական անձնակազմի վարձատրության մասնաբաժինը նույնպես Հայաստանում բարձր է: Արդյունքում այլ ընթացիկ ծախսերի մասնաբաժինը Հայաստանում ամենացածրերից է, ինչը կարող է հանգեցնել ուսումնական նյութերի անբավարար առկայության:

Ծախսերն ըստ կրթական մակարդակների:

2016-2021 թվականներին տարրական և միջնակարգ կրթությանը հատկացվել է ըստ մակարդակների դասակարգվող հանրային կրթական ծախսերի 2/3-ը:

Նախադպրոցական կրթությանը մեկ շնչի հաշվով ուղղվող ծախսերի մեծությամբ Հայաստանը զիջում է համադրելի և հենանիշային երկրներին:

Նույնիսկ երբ անտեսում ենք համավարակային 2020

թվականը, Հայաստանում մեկ նախադպրոցական հաստատության հաշվով միջին ծախսերը 2016-2019 թվականներին աճել են տարեկան ընդամենը 0,5 %-ով, իսկ գնաճով ճշգրտված իրական ցուցանիշը նվազել է: 2019 թվականին մեկ սանի հաշվով ծախսերը մեկ աշխատանքային օրվա հաշվով եղել են ընդամենը 1,076 դրամ (կամ 2.2 ԱՄՆ դոլար):

2016-2021 թվականներին միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության վրա ծախսերն իրական արտահայտությամբ աճել են տարեկան 0.6 %-ով: Միաժամանակ, տարրական կրթության վրա իրական ծախսերն աճել են տարեկան 0.3 %-ով, իսկ հիմնական ընդհանուր կրթության վրա իրական ծախսերը նվազել են տարեկան 1.7 %-ով:

Հայաստանում տարրական և միջնակարգ կրթության վրա հանրային ծախսերն ամենացածրն են համադրելի և հենանիշային երկրների թվում և 2020 թվականին եղել են 270.2 համարժեք գնողունակության դոլար:

2022 թվականի պետական բյուջեով միջնակարգ կրթությանը հատկացված ծախսերի՝ 2019 թվականի համեմատ միջին տարեկան իրական աճը եղել է ընդամենը 0.3 %, իսկ տարրական կրթության դեպքում՝ 5.8 %:

© UNICEF Armenia/2021/Գրիգորյան

Եթե 2022 թվականին պետական բյուջեով տարրական և միջնակարգ կրթության համար նախատեսված ծախսերն իրագործվեն, ապա 2019 թվականի համեմատ միջին տարեկան իրական աճը կլինի 2.2 %, որը կարևոր ձեռքբերում կլինի Կառավարության համար՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կանխատեսվում է, որ 2 %-ից ցածր կլինի:

Միևնույն ժամանակ, 2021 թվականին մեկ աշակերտի հաշվով իրական ծախսերը և՛ տարրական, և՛ միջնակարգ կրթությունում ավելի ցածր են եղել, քան 2016 թվականին:

Ուսուցիչների վարձատրություն: Ուսուցիչների միջին զուտ աշխատավարձը աղքատության վերին գիծը գերազանցում է

ընդամենը 84 %-ով: Ընդ որում՝ ուսուցիչների միջին տարեկան վարձատրությունը կազմում է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 58 %-ը: Լատվիայում միևնույն ցուցանիշը կազմում է 168 %, Սլովենիայում՝ 182 %, Լեհաստանում՝ 197 %, իսկ Թուրքիայում՝ 361 %:

Ուսուցիչների միջին աշխատավարձը Հայաստանում միջին աշխատավարձին հավասարեցնելու համար Կառավարությանն անհրաժեշտ կլինի հատկացնել պետբյուջեի եկամուտների մոտավորապես 1,7 %-ին համարժեք գումար:

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿՐՈՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների միավորման արդյունքում նվազել է միջգերատեսչական բյուրոկրատիան: Այդուհանդերձ, որոշ, մասնավորապես արտադպրոցական կրթության դեպքում կառավարումն ավելի համակարգված և միասնական դարձնելու խնդիր կա:

Գործառույթների բաշխումը մի կողմից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ), մյուս կողմից՝ մարզպետարանների և համայնքների կրթության վարչությունների ու բաժինների միջև ոչ ամբողջովին է հստակեցված, և առկա է գործառույթների որոշ կրկնօրինակում:

ԿԳՄՍՆ հանրակրթության վարչությունը վերապատրաստումների, կրթական տեխնոլոգիաների, դասագրքերի գնահատման տեսանկյունից ունի ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների զարգացման խնդիր:

ԿԳՄՍՆ-ն և նրան ծառայություններ մատուցող գերատեսչությունները (Գնահատման և թեստավորման կենտրոն, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) ունեն կարողությունների զարգացման անհրաժեշտություն, մասնավորապես մշտադիտարկման, վերլուծության և գնահատման բնագավառներում:

Դպրոցների ներքին գնահատումն իրականացվում է անարդյունավետ, մինչդեռ անկախ կազմակերպությունը դպրոցների արտաքին գնահատում ընդհանրապես չի իրականացնում:

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) միջոցով դպրոցներից հավաքվում է մեծ ծավալի

տեղեկատվություն, սակայն դպրոցները վերլուծական նյութերի ձևով որևէ հետադարձ արձագանք չեն ստանում նախարարությունից:

ԿԳՄՍ նախարարին կից գործող աշակերտական և ծնողական խորհուրդներն արդյունավետ գործունեություն չեն ծավալում:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ, ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հայաստանում հանրակրթության համակարգը ներառում է նախադպրոցական կրթությունը և պարտադիր միջնակարգ կրթությունը (1-12-րդ դասարաններ): Վերջինը բաղկացած է տարրական (1-4-րդ դասարաններ), հիմնական (5-9-րդ դասարաններ) և միջնակարգ (10-12-րդ դասարաններ) կրթությունից: Հանրակրթական պետական դպրոցներում կրթությունն անվճար է, իսկ հանրակրթական դպրոցի առաջին դասարան ընդունվելու պաշտոնական տարիքը վեց տարին է:

Նախադպրոցական կրթությունում ընդգրկվածությունը և առաջարկի ծածկույթը.

3-5 տարեկան երեխաների զուտ ընդգրկվածությունը 2019 թվականին եղել է 42.0 %՝ 2010 թվականի 28.5 %-ի համեմատ: Մինչդեռ համախառն ընդգրկվածությունը, որը ներառում է նաև 6 և 7 տարեկաններին, եղել է 61.6 %: Այսպիսով՝ 3-5 տարիքային խմբի երեխաների կեսից ավելին չի հաճախում որևէ նախադպրոցական հաստատություն և, ենթադրաբար, առաջին դասարան է հաճախում առանց անհրաժեշտ հմտությունների:

Երևանում նախադպրոցական կրթությունում համախառն ընդգրկվածության դրույքը 2019 թվականին եղել է 37.1 %: Ըստ բնակավայրի տեսակի՝ 2019 թվականին քաղաքներում համախառն ընդգրկվածությունը եղել է 39.6 %, իսկ գյուղերում՝ 25.4 %:

2010-2020 թվականներին մանկապարտեզների (հանրային և մասնավոր) թիվն ավելացել է 271-ով (կամ 42.4 %-ով), մինչդեռ նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թիվը (հանրային և մասնավոր) աճել է 40.8 %-ով: Միաժամանակ, նախադպրոցական տարիքի բնակչության (0-5 տարեկան) թվաքանակը նվազել է 7.5 %-ով:

Նախադպրոցական հաստատությունների առաջարկի

ծածկույթը 3-5 տարեկան երեխաների համար մոտ 70 % է: Նախորդ տասնամյակի ընթացքում մարզերում մանկապարտեզների թվի ավելացումը զգալիորեն բարելավել է ընդգրկվածությունը, թեև առաջարկի առկա ծածկույթի պայմաններում 2020 թվականին 0-5 տարեկան երեխաների միայն 37.2 %-ը կարող էր ընդգրկվել նախադպրոցական հաստատություններում:

2018 թվականին նախադպրոցական կրթությունում մեկ դաստիարակի հաշվով սաների թիվը Հայաստանում եղել է 6.3, Մոլդովայում՝ 11.9, Լատվիայում՝ 9.7, Սլովակիայում՝ 12, մինչդեռ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրներում միջինը եղել է 15.2: Այսպիսով՝ աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը Հայաստանում զգալիորեն ցածր է եղել ՏՀԶԿ միջինից:

Երևանում նախադպրոցական կրթությունը ծառայությունից օգտվողների համար անվճար է, իսկ մարզերում/համայնքներում ծնողները վճարում են, ընդ որում՝ վճարի չափը համայնքներում տարբեր է: Ամեն դեպքում, բոլոր մարզերում/համայնքներում նախադպրոցական կրթությունը զգալի չափով լրավճարվում է:

Դպրոցական կրթությունում ընդգրկվածությունը և առաջարկի ծածկույթը:

Դպրոցահասակ տարիքի յուրաքանչյուր 10 երեխայից մեկն ընդգրկված չէ տարրական կամ միջին դպրոցում: Մասնավորապես, 2020 թվականին հանրակրթությունում ներգրավված չեն եղել (մշտական բնակչությունից) 6 տարեկանների 15.9 %-ը, 9 տարեկանների (4-րդ դասարան) 9.9 %-ը, 14 տարեկանների (9-րդ դասարան) 13.2 %-ը:

Հայաստանում համախառն ընդգրկվածության դրույքն ամենացածրն է համադրելի և հենանիշային երկրների թվում: Միևնույն ժամանակ, մարզերի քաղաքային բնակավայրերում տարրական կրթությունում համախառն ընդգրկվածության դրույքը գերազանցում է 100 %-ը, ինչը, ըստ երևույթին, պայմանավորված է մերձակա գյուղական բնակավայրերից զգալի թվով աշակերտների ներհոսքով:

Ավագ դպրոցներում առկա է ընդգրկվածության էական գենդերային տարբերություն. աղջիկների ընդգրկվածության դրույքը 10 տոկոսային կետով գերազանցում է տղաներինը, ինչը փաստում է, որ տղաների՝ կրթությունը շարունակելու

հավանականությունը համեմատաբար ավելի փոքր է:

2019-2020 թվականներին շուրջ 44,500 դպրոցահասակ երեխա ընդգրկված չի եղել պարտադիր կրթությունում կամ չի հաճախել դպրոց:

Մարզերի քաղաքային բնակավայրերի դպրոցները գերծանրաբեռնված են (աշակերտների թվաքանակ/նախագծային հզորություն = 106.3 %), իսկ առաջարկը սահմանափակ է (նախագծային հզորություն/բնակչության թվաքանակ (6-17) = 84.7 %):

Հայաստանում տարրական և հիմնական կրթությունում աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը ամենաբարձրերից է համադրելի և հենանիշային երկրների թվում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության տնտեսական ազդեցություն:

Բարձրագույն կրթություն ունեցողների զբաղվածության մակարդակն ավելի բարձր է, քան կրթության ավելի ցածր մակարդակ ունեցողներինը: 2010-2020 թվականներին բարձրագույն կրթություն ունեցողների զբաղվածության մակարդակը միջինում եղել է 61.8 %, իսկ, օրինակ, լրիվ միջնակարգ կրթություն ունեցողներինը՝ 47.8 %:

Միևնույն ժամանակ 2020 թվականին 15-29 տարեկանների 30,1 %-ը ո՛չ աշխատում էր, ո՛չ սովորում: Ընդ որում՝ աշխատողների, սովորողների դրույքը զգալի տարբերվում էր՝ կախված տարիքային խմբից, սեռից և բնակավայրի տեսակից:

Բարձրագույն կրթություն ունեցողների միջին ամսական զուտ աշխատավարձը/եկամուտը 2020 թվականին 25.7 %-ով գերազանցել է կրթության ավելի ցածր մակարդակ ունեցողների աշխատավարձը: Բարձրագույն կրթությունն ապահովում է համեմատաբար բարձր եկամուտ:

Կրթության սոցիալական ազդեցություն:

Կրթական մակարդակից կախված՝ ծնելիության գործակցի փոփոխությունը Հայաստանում համապատասխանում է հիմնական տեսական մոտեցմանը: Հայաստանի Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության (ԺԱՀՀ) 2015-2016 թվականների տվյալները ցույց են տալիս, որ կրթության ավելի բարձր մակարդակի դեպքում ծնելիության ընդհանուր

գործակիցը, ինչպես նաև 40-49 տարեկան կանանց՝ երբևէ ունեցած երեխաների միջին թվաքանակը նվազում են:

Հայաստանի ԺԱՀՀ 2015-2016 թվականների տվյալները նաև ցույց են տալիս, որ բարձրագույն կրթությամբ 15-49 տարեկան ամուսնացած կանայք ավելի հաճախ են կիրառում հակաբեղմնավորման ժամանակակից մեթոդներ, քան հիմնական կրթություն ունեցող կանայք: Միևնույն ժամանակ, հղիությունը կենդանի ծնունդով ավարտած կանանց մասնաբաժինը, որոնք հղիության ընթացքում ընդունել են ֆոլաթթվի հաբեր կամ բազմավիտամիններ, հիմնական կրթություն ունեցող կանանց շրջանում ավելի ցածր է, քան բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում:

Կրթության ազդեցությունը վստահության, քաղաքացիական ակտիվության եւ առողջության վրա:

Հայաստանում կրթության բարձր մակարդակը փոխկապակցված է քաղաքացիական ակտիվության, հանրային կառույցների նկատմամբ վստահության և առողջ ապրելակերպ խթանող վարքագծի հետ:

Առանցքային բացահայտումների ամփոփագիր

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Մարզերում նախադպրոցական, տարրական և միջին դպրոցի տարիքի բնակչության թվաքանակը մինչև 2030 թվականը կնվազի, իսկ ավագ դպրոցի տարիքի բնակչության թվաքանակը կաճի:

   Երևանում միջին և ավագ դպրոցի տարիքի բնակչության թվաքանակը կաճի համապատասխանաբար մեկ տասներորդով և մեկ երրորդով, ինչը զգալի չափով պայմանավորված կլինի գյուղական և այլ քաղաքային բնակավայրերից բնակչության ներքին տեղաշարժով:

2. Մանկական աղքատությունը շարունակում է մնալ էական հիմնախնդիր, քանի որ երեխաների մեկ երրորդն աղքատ է, ընդ որում՝ բոլոր տարիքային խմբերի թվում աղքատության դրույքն ամենից

© UNICEF Armenia/2021/Մարգարյան

բարձրը երեխաների շրջանում է: Պարտադիր կրթությունից դուրս մնացած ծայրահեղ աղքատ երեխաների մեկ հինգերորդը դպրոց չի հաճախել աշխատելու կամ միջոցների սղության պատճառով:

3. ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը և մալարիան Հայաստանում հանրային առողջության լուրջ հիմնախնդիրներ չեն, թեև վերջին շրջանում երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի դեպքերի աճի մտահոգիչ միտում է արձանագրվում:

Միևնույն ժամանակ, շնչառական օրգանների հիվանդությունները շարունակում են զգալի չափով խաթարել կրթական գործընթացը, հատկապես նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:

Հայաստանում, ըստ պատվաստումների ծածկույթի պաշտոնական ցուցանիշի, մինչև 3 տարեկան յուրաքանչյուր տասներորդ երեխան չի պատվաստվում: Քաղաքներում պատվաստումների ծածկույթն ավելի ցածր է, քան գյուղական բնակավայրերում: Ընդհանուր առմամբ, պատվաստումներից խուսափումը Հայաստանում գնալով ավելի լուրջ խնդիր է դառնում:

4. Երեխաների թերսնումը շարունակում է մնալ էական հիմնախնդիր, քանի որ Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ տնային տնտեսություն սննդի պակաս ունի: 2012 թվականից Հայաստանում իրականացվող դպրոցական

սննդի ծրագիրն առողջության և ուսումնառության բարելավման առումով բարձր հատույց ապահովելու մեծ ներուժ ունի:

5. Մանկական հաշմանդամության գրանցված դեպքերի թիվն աճում է, իսկ իրական թիվը կարող է ավելի մեծ լինել թերգրանցման, հայտնաբերման և հարակից խնդիրների պատճառով:

Համընդհանուր ներառական կրթության ներդրումը նշանակալի ձեռքբերում է: Այնուամենայնիվ, թերապևտիկ, մանկավարժական և հոգեբանական աջակցությունը միշտ չէ, որ պատշաճ չափով հասանելի է, և դպրոցական (նախադպրոցական) ենթակառուցվածքները միշտ չէ, որ պատշաճ կերպով հարմարեցված են հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին:

6. Հայաստանի դպրոցների կեսից ավելին ենթակա են բարձր սեյսմիկ ռիսկի: Հանրակրթական հաստատությունների շենքերի մեծ մասը չի համապատասխանում սեյսմակայունության ժամանակակից պահանջներին:

7. Երկրորդային վտանգների միջին ռիսկը ցածր է, սակայն 70 դպրոց Մեծամորի ատոմակայանից 50 կմ շառավղով հեռավորության վրա է, հիմնականում՝ Երևանում և Արմավիրում:

8. Քովիդ-19 համավարակն ակնառու ցուցադրեց կրթական համակարգի անպատրաստվածությունը հեռավար ուսուցմանը՝ սկսած համացանցին և համակարգիչներին հասանելիությունից մինչև առցանց կրթական բովանդակության, օրենսդրական կարգավորման և թվային ուսուցում մշակող ու մատուցող մասնագետների առկայությունը: Բովանդակության առումով e-school Armenia առցանց հարթակի գործարկումը նշանակալի դրական զարգացում է, թեպետ դեռ շատ անելիք կա բարձրորակ բովանդակություն ապահովելու համար:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

9. Կրթության ոլորտում հանրային ծախսերի ցուցանիշներով Հայաստանի կատարողականն ամենավատն է համադրելի և հենանիշային երկրների թվում: Հայաստանը զիջում է ինչպես ՀՆԱ-ում հանրային ծախսերի մասնաբաժնով, այնպես էլ կրթության յուրաքանչյուր մակարդակում մեկ շնչի կամ

մեկ ուսանողի հաշվով ծախսերի մեծությամբ:

10. Ուսուցիչների միջին զուտ աշխատավարձը միայն 84 %-ով է բարձր աղքատության ազգային գծից: Ընդ որում՝ ուսուցիչների միջին տարեկան վարձատրությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ընդամենը 58 %-ն է, մինչդեռ հենանիշային երկրներում այն շատ ավելի մեծ մասնաբաժին ունի:

Կառավարության վերջերս ընդունած ծրագիրը, որը զգալիորեն բարձրացնում է կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների աշխատավարձը, անհրաժեշտ է արագ կենսագործել:

11. 2016-2021 թվականներին տարրական և միջնակարգ (լրիվ) կրթության վրա իրական ծախսերն աճել են տարեկան համապատասխանաբար 0.3 %-ով և 0.6 %-ով, իսկ հիմնական կրթության վրա իրական ծախսերը տարեկան կտրվածքով նվազել են 1.7 %-ով:

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԱԿՐՈՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

11. Երեք նախարարությունների միավորումը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) շրջանակում զգալիորեն նվազեցրել է միջգերատեսչական բյուրոկրատիան:

12. ԿԳՄՍՆ-ի, մարզպետարանների և համայնքապետարանների միջև գործառույթների բաշխումը ոչ ամբողջովին է հստակեցված, և առկա է գործառույթների որոշ կրկնօրինակում, հատկապես համայնքների խոշորացման համատեքստում:

13. ԿԳՄՍՆ հանրակրթության վարչությունն ունի ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների զարգացման խնդիր:

14. ԿԳՄՍՆ-ն և նրան ծառայություններ մատուցող գերատեսչություններն ունեն կարողությունների զարգացման անհրաժեշտություն, մասնավորապես մշտադիտարկման, վերլուծության և գնահատման բնագավառներում:

15. ԿԳՄՍՆ-ի վարչությունների, կրթության մարզային վարչությունների ու ԿԳՄՍՆ-ին ծառայություններ մատուցող գերատեսչությունների կանոնադրությունները

պարունակում են գործառույթները կրկնօրինակող դրույթներ:

16. Դպրոցների ներքին գնահատումն իրականացվում է անարդյունավետ, մինչդեռ անկախ գնահատողի կողմից արտաքին գնահատում ընդհանրապես չի իրականացվում, թեև դա օրենսդրության պահանջ է:

17. Դպրոցական խորհուրդների գործունեության արդյունավետությունը ցածր է:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ, ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

18. 2019 թվականին՝ նախքան համավարակը, 0-2 տարեկան երեխաների զուտ ընդգրկվածության դրույքը 5.0 % էր, իսկ 3-5 տարեկան երեխաների համախառն ընդգրկվածության դրույքը՝ 61.6 %:

19. Նախորդ տասնամյակի ընթացքում դպրոցական կրթության բոլոր մակարդակներում ընդգրկվածությունը վատթարացել է:

Տարրական կրթությունում (1-4-րդ դասարաններ) զուտ ընդգրկվածության դրույքը 2020 թվականին 90.1 % էր՝ 2011 թվականի 94.2 %-ի համեմատ:

Հիմնական կրթությունում (5-9-րդ դասարաններ) զուտ ընդգրկվածության դրույքը 2020 թվականին 89.2 % էր՝ 2011 թվականի համեմատ նվազելով 9.4 տոկոսային կետով:

Միջնակարգ (լրիվ) կրթությունում (10-12-րդ դասարաններ) համախառն ընդգրկվածությունը 2020 թվականին 57.9 % էր, ինչը 2011 թվականի համեմատ 21.4 տոկոսային կետով ցածր էր:

20. Իններորդ դասարանցիների մոտավորապես տասից մեկը ուսումը չի շարունակում՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում 2017 թվականից 12-ամյա կրթությունը պարտադիր է:

21. Ավագ դպրոցների ընդգրկվածությունում զգալի սեռային տարբերություն կա, քանի որ աղջիկների ընդգրկվածության համախառն դրույքը 2020 թվականին 63.5 % էր, իսկ տղաներինը շուրջ 10 տոկոսային կետով ցածր էր:

22. 2020 թվականին տարրական և հիմնական կրթության վերջին դասարանների

համախառն ընդունման դրույքը համապատասխանաբար 93.2 % և 90.1 % էր: 2012 թվականի կոհորտի համար, որը 2020 թվականին հասել էր 9-րդ դասարան, 9-րդ և 1-ին դասարանցիների հարաբերակցությունը եղել է 92 %:

23. Պետական հանրակրթական հաստատություններում աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը Հայաստանում 2019 թվականին եղել է 12.7: Հենանիշ երկրների համեմատ Հայաստանում աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունն ամենացածրն է միջնակարգ (լրիվ) կրթությունում, բայց ամենաբարձրերից է տարրական և հիմնական կրթությունում:

24. Հայաստանն ունի զգալի թվով շատ փոքր դպրոցներ: 2020 թվականին դպրոցների 6.3%-ն ուներ 20 կամ ավելի քիչ աշակերտ, որոնցում սովորում էր բոլոր աշակերտների ընդամենը 0.3 %-ը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

25. Հայաստանում աշխատանքային ռեսուրսները բնութագրող հիմնական տնտեսական ցուցանիշները, ինչպիսիք են մասնակցության, զբաղվածության և գործազրկության մակարդակները, վերջին տարիներին համեմատաբար կայուն են եղել:

26. Կրթության ավելի բարձր մակարդակը տնտեսապես շահավետ է: Կրթության մեջ ներդրումների հատույցը զգալիորեն ավելի բարձր է բարձրագույն կրթությունում:

27. Փոխարինումից ցածր ծնելիության գործակիցն էական հիմնախնդիր է, քանի որ Հայաստանը կանգնած է բնակչության թվաքանակի նվազման հեռանկարի առջև, ինչը կարող է վտանգել երկարաժամկետ տնտեսական աճի հեռանկարը:

28. Ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող մարդիկ ավելի մեծ քաղաքացիական ներգրավվածություն են ցուցաբերում, ինչը, սակայն, չի կարելի ասել հանրային հաստատությունների նկատմամբ նրանց վստահության մասին:

29. Ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող մարդիկ

ավելի բարձր առողջական ինքնագնահատվող կարգավիճակ ունեն: Այս հանգամանքը համահունչ է այն վարկածին, որ որքան ավելի կրթված են մարդիկ, այնքան ավելի տեղեկացված ընտրություն են կատարում իրենց առողջության վերաբերյալ:

Քաղաքականության առաջարկությունների ամփոփագիր

1. Հաշվի առնելով Երևանում ավագ դպրոցի տարիքի բնակչության կանխատեսվող աճը՝ ցանկալի է, որ Կառավարությունն ակտիվացնի Երևանի ավագ դպրոցների ընդլայնման աշխատանքները:

   Ցանկալի է, որ Կառավարությունն օպտիմալացնի գյուղական բնակավայրերում դպրոցական շենքերի օգտագործումը՝ դիտարկելով դրանք նաև իբրև նախադպրոցական, արտադպրոցական և համայնքային կենտրոններ համատեղ օգտագործելու հնարավորությունը:

2. Ցանկալի է, որ Կառավարությունն ավելի նպատակային դարձնի սոցիալական աջակցության իր քաղաքականությունը, որպեսզի Հայաստանում որևէ երեխա ֆինանսական պատճառով չխուսափի դպրոց հաճախելուց:

3. Ցանկալի է, որ Կառավարությունը մշակի և իրագործի հանրային տեղեկատվության և կրթության երկարաժամկետ ռազմավարություն՝ բարձրացնելու և՛ երեխաների, և՛ ծնողների իրազեկվածությունն առողջ ապրելակերպի վերաբերյալ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով պատվաստմանը, հիգիենային, չծխելուն, կանոնավոր մարզվելուն և այլն:

4. Ցանկալի է, որ Կառավարությունն ավելի հետևողականորեն պարտադրի ենթակառուցվածքային չափանիշների կիրառումը, քանի որ Հայաստանում շարունակում է զգալի չափով չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների ֆիզիկական հասանելիության խնդիրը:

5. Ցանկալի է, որ Կառավարությունն ավելի բարձր առաջնահերթություն տա դպրոցական շենքերի

սեյսմակայունության բարձրացմանը և ժամանակակից դպրոցական և նախադպրոցական շենքերի կառուցմանը:

6. Ցանկալի է, որ Կառավարությունը մշակի աշակերտների տարհանման ընթացակարգեր և պատշաճ կերպով իրազեկի շահառուներին: Ցանկալի է նաև, որ ապաստարաններ կառուցվեն/արդիականացվեն՝ ճառագայթման հնարավոր ազդեցությունից պաշտպանվելու համար:

7. Ցանկալի է, որ Կառավարությունը ներդրումներ կատարի համայնքային կենտրոններում, հատկապես գյուղական բնակավայրերում՝ տնտեսապես անապահով երեխաներին ինտերնետ և համակարգչային հասանելիություն ապահովելու համար:

Ցանկալի է, որ Կառավարությունն ընդլայնի դպրոցական համակարգիչների ձեռքբերումը, քանի որ դպրոցական համակարգիչների մեծ մասը կա՛մ շարքից դուրս եկած է, կա՛մ մաշված:

8. Ցանկալի է, որ Կառավարությունը շեշտակի ընդլայնի կրթական ծախսերը և միջնաժամկետ հեռանկարում նպատակադրի համադրելի երկրների մակարդակին հասնելը: Անհրաժեշտ է առանձնահատուկ կարևորություն տալ ուսուցիչների աշխատավարձերի նշանակալի բարձրացմանը:

9. Ցանկալի է, որ Կառավարությունը նպատակադրի նախադպրոցական կրթության 100 % ընդգրկվածության հասնելը:

10. Լրացուցիչ հետազոտություն է անհրաժեշտ՝ պարզելու, թե որոնք են հիմնական դպրոցի շրջանավարտների մի մասի՝ ուսումը չշարունակելու պատճառները:

11. Ցանկալի է, որ Կառավարությունը բարելավի պարտադիր կրթությունից դուրս մնացած/դուրս մնալու վտանգին ենթակա երեխաների հայտնաբերման համակարգը և արդյունավետ միջոցներ ձեռնարկի այդ երեխաների՝ դպրոց հաճախումն ապահովելու համար:

12. Ցանկալի է, որ Կառավարությունն անդրադառնա ավագ դպրոցներում տղաների համեմատաբար ցածր ընդգրկվածության խնդրին:

13. Ցանկալի է վերանայել և հստակեցնել գործառույթների բաշխումը ԿԳՄՍՆ-ի և մարզպետարանների/

համայնքների կրթության վարչությունների/բաժինների միջև, հատկապես համայնքների խոշորացման համատեքստում:

Անհրաժեշտ է վերանայել ԿԳՄՄՆ վարչությունների, կրթության մարզային վարչությունների և ԿԳՄՄՆ-ին ծառայություններ մատուցող կառույցների կանոնադրությունները՝ լիազորությունների կրկնօրինակումից խուսափելու և գործառույթներն առավել ներդաշնակորեն բաշխելու համար:

14. Ցանկալի է, որ Կառավարությունն անդրադառնա խոշորացված համայնքների կարողությունների զարգացման խնդրին, որպեսզի փոխանցի կրթական հաստատությունների կառավարման լիազորությունների մի մասը:

15. Ցանկալի է զարգացնել ԿԳՄՄՆ միջին մակարդակի ղեկավար անձնակազմի կարողությունները՝ ԿԳՄՄՆ-ին ծառայություններ մատուցող գերատեսչությունների գործունեությունը համակարգելու առումով:

16. Ցանկալի է զարգացնել ԿԳՄՄՆ հանրակրթության վարչության, ինչպես նաև ԿԳՄՄՆ-ին ծառայություններ մատուցող գերատեսչությունների մշտադիտարկման, վերլուծության և գնահատման կարողությունները:

17. Ցանկալի է իրագործել դպրոցների պարբերական արտաքին գնահատում և ներդնել դպրոցների հաշվետվողականության արդյունավետ համակարգ:

ISBN 978-9939-1-1601-3

9 789939 116013